funded by

Հայտարարագիր

Սույնով հաստատում եմ, որ մենք տեղյակ ենք Հայաստանի բնության և շրջակա միջավայրի պաշտպանության կարևորության մասին:

Մենք կհետևենք Հայաստնի շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրությանը և կարգերին: Մենք մեզ պատասխանատու ենք զգում Հայաստնի շրջակա միջավայրի, նրա հրաշալի և յուրօրինակ բնության՝ բուսական և կենդանական աշխարհի համար:

Այս կապակցությամբ, մենք կգործադրենք բոլոր հնարավոր ջանքերը նվազեցնելու մեր ծրագրի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Բացի բոլոր պաշտոնական, իրավական պահանջներից, որոնք բոլոր դեպքերում պահպանելու ենք, մենք կապահովենք.

- Շինարարական հրապարակի մաքրությունը շինարարության ավարտից հետո:
- Շինարարական աղբի տեղափոխումը օրինական ճանապարհներով հատուկ նախատեսված վայրերը:
- Գետերի պաշտպանությունը որևէ վտանգավոր նյութերով աղտոտումից, ինչպիսիք են յուղերը, քիմիկատները և այլն:
- Շինարարական տարածքներում բուսականության վնասման նվազագույնի հասցնելը:
- Վերականգնող միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են՝ ծառապատումը, շինարարության ընթացքում օգտագործվող, բայց շահագործման ժամանակ այլևս պետք չեկող տարածների վերականգնումը՝ ժամանակավոր ճանապարհներ, թեքություններ և այլն:
- Գետերում ջրի այն նվազագույն հոսքը, որը կերաշխավորի նրանց էկոլոգիական ֆունկցիան՝ ինչպես ձկների այնպես էլ այլ կենդանական աշխարհի բնականոն պայմանները գետի ամբողջ հունով:

_____ ՓՀԷԿ-ի _____ 2013թ.

Ներկայացուցիչ _____
Անուն ազգանուն

Պաշտոն_____